# ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆ
# Ս. ՎԱՐԴԱՆԱՆՑ ԶՕՐԱՎԱՐԱՑ
## ԶՈՐՍ ԳՈՐԾՈՂՈՒԹԵԱՄԲ.

(Շարունակ. տես Արարատ, 1881 Ապրիլ։)

---

### ՏԵՍԱՐԱՆ Ե.

### ԱՌԱՋԻՆՔ, ՎԱՍԱԿ, ԶԱՆԳԱԿ, ՊԵՏՐՈՍ ԵՒ ՄԻՀՐՆԵՐՍԷՀ.

ՄԻՀՐՆԵՐՍԷՀ.

*Բարի է ձեր գալուստը պատուական Հայեր, Արեաց արքայի և մեր յատուկ սիրոյ արժանի քաջեր, վստահ եղէք, որ ձեր աշխատութիւնն անվարձ չի մնում, դուք արժանի էք ամենայն պատւոյ և փառաց, զձեզ պիտի կարգեմ ընդհանուր Հայաստանի մոգպետ, Հայ քահանայից ինչ. և ստացուածք ձեզ պիտի տամ որդւոց որդի. դուք այսօրից սկսած՝ մոգպետի իրաւունք ունիք, կարող էք Հայաստանի մէջ ձեզ ստորադաս պաշտօնակալներ ընտրել ձեր համախոհներից.*

ԶԱՆԳԱԿ.

*Տէր իմ, մեք վարձ ստանալու յուսով չեմք աշխատում, բաւական է, որ Հայաստանից վերնայ Քրիստոնէութեան ծանր լուծը, զոր բորոտ Արգար և գիւահար Տրդատ թագաւորներ բռնութեամբ դրին Հայոց վզի վերայ, որի տակ ճնշուել եմք իսպառ.*

ՊԵՏՐՈՍ.

*Այո, Քրիստոնէութեան ծանր լուծը մեզ ճնշել է բոլորովին, Հայեր երբ Քրիստոնէական կրօնը չէին ստացել, բոլոր ազգաց յաղթող էին, իսկ երբ ընկան այն մոլար աղանդի մէջ, օր ըստ օրէ տկարացան, սակաւացան և աշխարհի առեղի_դարձան, եթէ մազդեզանց օրէնքին հետևէին, կրկին տէր կը լինէին աշխարհի.*

ՄԻՀՐՆԵՐՍԷՀ.

*Ահա ճշմարիտ Հայ և հայութեան օգուտ պաշտպանող, քոյ ճանաչել էք, որ Հայոց տկարութեան և օր ըստ օրէ նուազելու պատճառը եղել է իւր կրօնը, հրամայելով փախչել պարարտ կերակրից և բազմակնութիւնից, թէև անժառանգ մնայ աշխարհի վերայ կնոջ ամլութեան պատճառաւ.*

ԶԱՆԳԱԿ.

*Արդարև այդպէս է Տէր իմ, ես մի հիւանդոտ կին ունիմ, որ ամուլ է, գորա կինն էլ վաղուց մեռած է, մեք անժառանգ և անյիշատակ պիտի մնանք*

Եթէ մոգական ներող օրէնքին չգիտենք, որ ազգի ազատութեան և ընտա-նեկան սիրոյ և միութեան պատճառ է, հրամայելով կին առնել մայրը, քոյրերն ու միւս ազգակիցները, մինչդեռ ընդ հակառակն Քրիստոնէութիւնը արգելում է մերձաւորաց խնամութիւն, և օտար անծանօթի հետ միայն աղ-ջիկ տալ առնել կանոնած է, և որքան միմեանց հակառակ, ատող և անյար-մար լինեն պէտք է, միմեանց հետ կենակցին, ապա թէ ոչ, անկին մնան. մանաւանդ հինգ տարի յառաջ Շահապիւանու յիմար ժողովի կարգա-դրութիւնը, որ սարսափելի տուգանքներ սահմանեց փոքրիկ յանցաւորին՝ և Քրիստոնէական կրօնն խայտառ զզուելի արեց Հայ ժողովրդեան.

ՄԻՀՐՆԵՐՍԷՀ.

Ձեզ նման քաջերն իրաւունք ունին հարիւրաւոր կանայք և հարճեր ունենալ, ոչ թէ ամենայն վայելչութիւնից զրկուել, ես հրամայում եմ, որ ձեր մոլար քահանայից կանայք և աղջկունք և հարսունք ձեզ կին և հարճ առնեք որքան և կամիք, դուք մի մի փառաւոր պալատներ պիտի ունենաք կանանոց. յետ յաղթութեան ձեզ կը տամ Վաղարշապատու և Արտա-շատու մայր ատրուշանոց ատրուշանապետութիւնը հանդերձ մոգպետու-թեամբ, այժմ գնացէք լրտեսել Հայոց բանակը, գործեցէք քաջ Վասա-կայ խորհրդով, որ այսօր ստացաւ Հայոց թագաւորութեան իշխանու-թիւնը. ես կը գնամ արքայի մօտ, քիչ օրից յետոյ կը բերեմ Նորա համար թագ և գաւազան, գնացէք աւերել Հայոց և աշխատեցէք ցրուել ապըս-տամբաց միութիւնը, որ կարող լինիք ձեր նպատակին հասանել. Կարող էք գնալ, աստուածք ձեզ հետ.

ՊԵՏՐՈՍ ԵՒ ԶԱՆԳԱԿ.

Թող Յովսէփ կաթուղիկոս իւր տուգանաց 20-րդ կանոններն շալակելով տանէ Յունաց ծախելու, մեք ազատուեցանք նորա ծանրութիւնից, աս-տուածք ձեզ օգնական դիւցազունք արեւոց. (կը մեկնին).

ՄՈՒՇ — ՆԻՍԱՆ.

(ինքնին) Սոքա էլ կնամոլութեան ախտով կուրացած են, սոցա վերայ էլ յոյս դնել խոհեմութիւն չէ.

ՎԱՍԱԿ.

Հայ ժողովուրդը իբրև պատգամ Աստուծոյ է ընդունում սոցա քա-րոզները, վասն զի Հայը սովորել է քահանայից սուտն իբրև ճշմարիտ ըն-դունել.

ՄԻՀՐՆԵՐՍԷՀ.

Ես ահա կը գնամ արքայի մօտ ձեզ փառաց և յաղթութեան պսակ պատրաստել, և եթէ հարկը պահանջէ ձեզ օգնութեան համար գունդեր ուղարկել, մնայք բարեաւ.

ՎԱՍԱԿ ԵՒ ՄՈՒՇ—ՆԻՍԱԼ.

Գնացէ՛ք բարեաւ, Միհր ու Որմիզդ ձեզ ընկեր, հրամայեցէք մոգպետին զոհեր մատուցանել և յաջողութիւն խնդրել։

ՄԻՀՐՆԵՐՍԷՀ.

Քաջութիւնն ու խոհեմութիւնը ձեռքից չթողուք։ (կը մեկնի)։

ՄՈՒՇ—ՆԻՍԱԼ.

Ուրեմն և մեք հրաման տամք զօրաց պատրաստուել յառաջ խաղալ դէպի Արտազու դաշտը։

ՎԱՍԱԿ.

Այո՛, յառաջ խաղանք, բռնենք ամրութիւններն ու կիրճերը, բայց ես յարմար եմ համարում ընդհանուր զօրահանդէս կազմել, պատուէր տալ և քաջալերել։

ՄՈՒՇ—ՆԻՍԱԼ.

Շատ բարի. ([illegible]) Ամենայն զօրապետք հաւաքուեն վրանի առաջ դէպ ի աջ. (փող կը հնչէ)։

ՎԱՍԱԿ.

([illegible]) Հայկական գունդն ամբողջ հանդերձ զօրապետօք հաւաքուի վրանի ձախ կողմը։ ([illegible])

ՏԵՍԱՐԱՆ Զ.

ՄՈՒՇ—ՆԻՍԱԼ ԵՒ ՎԱՍԱԿ.

ՄՈՒՇ—ՆԻՍԱԼ.

([illegible]) Սիրելի քաջազունք Արեաց գնդի, դուք ամենքդ քաջ գիտէք ապստամբ Վարդանայ քաջութիւնը, դուք ես կրկին զօրութիւն զգեցէք. յիշեցէք արքայի հրամանն, ընտրեցէք քաջութեամբ մահն, քան փախստեամբ կեանքը. Հայոց գնդի և երկրի կողոպուտը ձեզ սեփականութիւն է տալ արքայն, միայն թէ աշխատեցէք Մազդեզանց օրէնքն Հայաստանի կեդրոնի մէջ հաստատել ձեր քաջութեամբ. ձեր պատերազմը միայն կանոնաւոր զօրաց հետ չէ, այլ և խառնիճաղանճ ամբոխի հետ, ուստի անխնայ կոտորեցէք առանց խտրութիւն անելու աստիճանի և հասակի, արք, կանայք, ծերք, մանկունք և հարսունք. այն զօրականը, որ թիկունքից վէրք ստանայ, փախստական է, նա կը պատժուի անշուշտ, և նորա ընտանիքը աքսորի կը մատնուի։ Պատրաստ եղէք յառաջ խաղալու դէպ ի Հայաստանի սահման, Արտազու դաշտ Տղմուտ գետի ափը, բռնել ամրութիւնները, միշտ յարձակողական դրից մէջ լինի բանակը, զարանամուտներն ու լրտեսներն անգործ չմնան.

ԶՕՐԱՊԵՏՔ.

*Մեր կեանք և մահ արքային ենք պարտական։*

ՄՈՒՇ—ՆԻՍԱԼ.

*Իւրաքանչիւր փղի շուրջ 3 հազար սպառազէն պատրաստուի, առջա բանակի յառաջ պատրաստ լինին կատաղաբար արշաւել Հայոց բանակի վերայ. Մատեան անմահ գունդն իմ շուրջը հաւաքուի. Անարեաց գնտերն իմ աջ կողմն գումարուի, իսկ Վասակայ Հայկական գունդը ձախ կողմն կանգնի ճակատամարտի ժամանակ, ձեր բոլորի ուշադրութիւնը և ջանքը ուղղակի Վարդանայ զօրաբաժնի վրայ ուղղեցէք.*

ԶՕՐԱՊԵՏՔ.

*Կամք քաջիդ մեզ առաջնորդ թող լինի, պատրաստ եմք և կազմ.*

ՎԱՍԱԿ.

(Դէպ ի [illegible] դիմելով՝ [illegible] ձայնով) *Սիրելի քաջազունք Հայոց, քաջացէք յաղթութեան պսակն ընդունել, Հայ անուն և արիւն պատւեցէք քաջութեամբ, յիշեցէք, որ ձեր ախոյեանը Հայեր են, ձեզ նման քաջեր են, ապստամբներ են. ապստամբ Հայը հրաշքներ է գործում՝, դուք քաջայէք խեղդել հրաշքը խանձարուրի մէջ, ջնջելով ապստամբութիւնը, ձեր քաջութեամբ միայն պիտի վերանորոգի Հայոց թագաւորութիւնն, Արեաց արքայի կամքն է, որ Հայոց թագաւորութիւնը իբրև պատուար կանգնի Յունաց դէմ, Հայաստանի Յունական մասն ես յետ պիտի պահանջուի և միանայ մեր մասի հետ. Այս պատերազմը կրօնական պատերազմ չէ, Յազկերտ արքայն արդէն կրօնական ազատութիւն տուել է, ով ինչ կամի այն պաշտի, Վարդան ապստամբել է արքայից, կաշառուելով Յունաց կայսերից, ցանկանում է խլել Հայաստանի արևելեան մասն և յանձնել Յունաց, ինքն փառք և պատիւ ստանայ, Հայերին ստրուկ անէ նենգ Յունաց. նա Հայկական արիւն չէ կրում իւր երակաց մէջ, դաւաճան է Հայոց, դուք աշխատեցէք ողջ բռնել Վարդանին և նորա կշռով ոսկի ստանալ արքայից, կամ սպանել և յաղթող հանդիսանալ, Երբ Վարդան և իւր համախոհ նախարարներն յաղթուին, դուք կստանայք տոհմական նախարարութիւն, հին նախարարաց տոհմն պիտի ջնջուի, եթէ մեզ հետ միացած չեն. Այսօր ես հանդիսաւոր կերպով կերդնում ամենայն ազգաց կրօնների և պաշտած աստուծոց վերայ, իմ քաջութեան և պատւոյ վերայ, որ ձեզ բոլորիդ պիտի նշանակեմ առատ պարգև, նախարար, զօրապետ ազատ իշխան, երբ յաջողեմ թագաւոր պսակուել Հայաստանի, և վասն զի այսօր ես ստացայ թագաւորելու իրաւունք և Միհրներսեհ գնաց արքայից բերել ինձ թագ և գաւազան. ուրեմն քաջացէք յաղթել ապստամբաց, ճակատամարտի ժամանակը հաւաքուեցէք իմ շուրջս, ուղիղ դիմել Վարդանայ զօրաբաժնի վերայ.*

ՈՒՐԱՑԵԱԼ ԶՕՐՔ ՀԱՅՈՑ

Կեցցէ Նորապսակ արքայն Հայոց Վասակ,

ՎԱՍԱԿ ԵՒ ՄՈՒՇ—ՆԻՍԱԼ.

Օ՜ն յառաջ, հնչեցեն փողք արշաւելոյ (Հնչեցնեն՝ երգելով. Ա. [illegible]).

(Վարագոյրը կիջնէ)

## ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ Գ.

### ՏԵՍԱՐԱՆ Ա

ՎԱՐԴԱՆ, ԽՈՐԷՆ, ԳԱՐԵԳԻՆ, ՀՄԱՅԵԱԿ, ՏԻՐՈՑ, ԳԱՏԻՇՈՅ,

ՎԱՐԴԱՆ.

Պատուական Տեարք, քաջ նիզակակիցք իմ, մեք Արեաց դուռը գնալով մեր կրօնի և ազգի պաշտպանութեան նպատակաւ յանձն առինք առ երեսս պաշտել անշունչ արեգակն ու կրակը, որպէս զի կրկին մեր Հայրենիք վերադառնալով միանայինք և զինուորելով պաշտպանէինք մեր եկեղեցին և ազգը Յազկերտի յարձակման դէմ, և միանգամայն սրբէինք մեր ուրացութեան կեղտը։ Երկինք երկնաւորներով և երկիր երկրաւորներով սուգ առին մեր ամբարշտութեան համար և նոյն իսկ մեր Հարք, եղբարք, որդիք և կանայք զինեցան մեր դէմ, առանց իմանալու մեր սրտի ծածուկը, որ միայն ծածկագիտին էր յայտնի. մեք յաջողեցանք կոտորել մոգերին, և միանգամայն ազգուրացներին, և օգնել Աղուանից, ահա այժմ ժամանակն է Յազկերտի բուռն յարձակման դէմ զինուելու, որ ահագին բազմութեամբ դիմում է Հայաստանի վերայ Մուշկան Նիսալաւուրտի առաջնորդութեամբ, բառնալ մեր Քրիստոնէական սուրբ կրօնն, լեզուն և գրութիւնը, ջնջել ազգութեան ոյժն ու պահապան ծառն, որոյ հովանեաց ներքոյ սնունդ է առնում Հայութիւն։ Եթէ մեք չմիանանք պաշտպանել մեր ազգն և Հայրենիք, թէ ուխտազանց պիտի լինիմք մեր սոսկալի երդման և թէ ապագայ սերնդոց նզովից և նախատանաց պիտի ենթարկուի մեր յիշատակը։

ԳԱՐԵԳԻՆ.

Տէր սպարապետ, մեք արդէն քաջ համոզուել ենք, որ մեր ազգութիւնը վերջին ճգնաժամի մէջ է այժմ, մահու և կենաց խնդիր է մեր այսօրեայ խորհրդի նիւթը, կրօնի պատերազմը դիմակ է Յազկերտի երեսի վերայ և պատրուակ, նորա բուն նպատակն է Հայ ազգութիւնը բառնալ աշխարհի երեսից, թէ չէ Հայեր՝ դժոխք պիտի գնան կամ արքայութիւն, նորա ի՞նչ հոգն է. նա իւր ազգի ապագայն հետամտելով վտանգ է գուշակում և աշխատում է բառնալ վտանգն, ամենայն ազգ և ազինք իւր ազգի հետ

ի մի ձուլելով՝ ստուարացնել և զօրացնել, բայց քաջ ճանաչում է, որ այդ լինում է միայն կրօնի միութեամբ, որ ազգերը միութեան մէջ է պահում և միակ նեցուկ է և կապ ազգութեան.

ԽՈՐԷՆ.

Մեր անմիաբանութիւնը այս ճգնաժամին հասցրեց մեր ազգն ու եկեղեցին, չլսելով մեր Հօվիւ և Հայր Սահակ Հայրապետի խրատուց, ընդունելով Պարսից առողջ գաղանը մեր հիւանդ աշխարհի փոխարէն, մեք մեր նախորդաց ազգակործան սխալմունքն ուրիշ բանով չենք կարող ուղղել, բայց միայն մեր միութեամբ, որից ամէն յաջողութիւն կարելի է սպասել, վասն զի երբ յաղթուել է Հայը մի օտար ազգից, պատճառը միայն ներքին խռովութիւնն ու անմիաբանութիւնն է եղել՝ և կամ օտարի առաջնորդող եղել է մի մատնիչ և ազգուրաց Հայ, այս ցաւալի ճշմարտութիւնը քաջ գիտելով օտարներն, աշխատում են նախ բաժանել մեզ զանազան կուսակցութեան, տկարացնել և ըստ այնմ յաղթել մեզ.

ՀՄԱՅԵԱԿ.

Տեարք իմ, ես հաւաստի տեղեկութիւն եմ ստացել, որ Յազկերտ խիստ վախենում է մեր միութիւնից, թէև անթիւ զօրք է ուղարկել մեր վերայ, բայց աշխատում է, որ և իցէ եղանակաւ առանց պատերազմի և արիւնհեղութեան յառաջ տանել իւր նպատակը, թէ և սարսափելի թշնամի է Վասակին, բայց Միհրներսէհի խորամանկութիւնը աշխատում է որչափ կարելի է գաղտնի պահել այս, մինչ հասնի իւր նպատակին. ուստի խոստացել է Վասակին Հայաստանի թագն ու գաւազանը որ կարենայ համոզել մեզ չպատերազմել, որպէս զի նոյն ահեղ բանակաւ առանց ընդդիմադրութեան դիմելով Հայաստանի խորերն, յառաջ տանէ իւր նպատակը. Վասակ թէև իբրև ազգասէր քաջ Հայ, բայց լինելով անհեռատես, փառամոլ և նախանձոտ եսամոլ, կոյր գործիք է դարձել Միհրներսէհի ձեռքը.

ՏԻՐՈՑ.

Եթէ նախանձու կրքից պաշարուած չլինէր մեր միտքն, անշուշտ Վասակայ նպատակը մեզ առաջնորդ պիտի ընտրէինք, վասն զի նա գիտէ, որ Հայաստան չունի այն միջոցն ու զօրութիւնը, որ կարողանայ Պարսից ահագին պատրաստութեան դէմ ենել, նա աշխատում է առ երեսս կատարել Յազկերտի առաջարկութիւնը.

ԴԱՏԻՃՈՅ.

Թէև ես յարգելով ազգի ամբողջութեան մէջ մնալը և ձեզ հետ միանում եմ արիւն թափել, բայց Վասակայ նպատակն աւելի օգտակար եմ ճանաչում. մեր ազգութեան պահպանութեան համար պէտք է առ երեսս ընդունել Մազդեզանց օրէնքը և ուրանալ Քրիստոնէութիւնը.

ՎԱՐԴԱՆ.

Քաջ նիզակակիցք իմ, Վասակայ գաղտնի և յայտնի գործոց ցուցակը չէ մնում առանց քննութեան և պատժի, նորա փառասիրութեանը չափ և սահման չկայ, Հայրենասիրութիւն և ազգասիրութիւն բառերը քնքուշ դիմակներ են նորա երեսին, որով կամի ծածկել իւր ներքին նպատակն, այն է Հայերը կրակապաշտ անել. իբրև մի կաթիլ ջուր Պարսից Ովկիանոսի հետ խառնելով կորցնել՝ մի քանի օր թագաւորելու ցանկութեամբ, բայց նորա պիղծ փուշին պիտի չարժանանայ Հայաստանի հողին խառնուել. նորա անունն իբրև նախատինք և հայհոյանք պիտի յիշուի նորա գործակից ազգուրացներին. (Վ–հր–մ կը մ–ն–է)

ՏԵՍԱՐԱՆ Բ.

ԱՌԱՋԻՆՔ ԵՒ ՎԱՀՐԱՄ.

ՎԱՀՐԱՄ.

Պատուական Տեառք, Յազկերտի պալատական ծածուկ Քրիստոնեայ ներքինի Միհրանից ստացայ այս նամակս մի գաղտնի Քրիստոնեայ Հայի ձեռքով, (կը տ–յ Վ–րդ–նին)

ՎԱՐԴԱՆ.

Մեք այդ պատուական ներքինու խորհրդով թէև ուրացութեան սարսափելի մեղքը գործեցինք, բայց մեր Հայրենեաց, ազգի և եկեղեցւոյ մեծ օգուտ եղաւ. եթէ մեք միայն մեր անձնական օգուտն հետևէինք, միայն մեր հոգւոյ փրկութեանը հոգ տանէինք, այժմ Հայաստանն արդէն խմած պիտի լինէր թշուառութեան դառն բաժակը. (կը կ–րդ–յ ն–մ–կն)

«Քրիստոսի ծառայ Միհրան ներքինի պալատական սպասաւոր Յազկերտ արքայի Վարդան սպարապետի Մամիկոնեան և քաջ նիզակակից նախարարացդ ողջոյն։

«Ես իբրև մի վառ ճրագ թագչել եմ իմ գրուանի տակ՝ աշտանակի վերայ փայլած ճրագներին օգնելու նպատակաւ.

«Տեառք իմ, Յազկերտ արքայն Վասակ մարզպանի վաւերական նամակներով հաստատ տեղեկացել է, որ դուք խաբել էք զինքն և միացած ժողովրդի հետ կոտորել էք մոգերին, քանդել էք ատրուշաններ, կոտորել էք Աղուանից մէջ Սեբուխտի զօրքը և միանգամայն Վասակայ կուսակցաց և որբունի զօրաց, հրամայեց Միհրներսէհին ահեղ պատրաստութեամբ դիմել Հայաստանի վերայ, բառնալ Քրիստոնէութիւն, և հաստատել մոգական պիղծ օրէնքը, ժամ է ձեզ միանալ, համաւոր զօրաժողով լինել արանց և կանանց և ընդդիմանալ բոլորին՝ յԱստուած ապաւինելով, որ կարող է սակաւներով բիւրաւոր բազմութեան գործ կատարել, խնդրեմ մի՛ խնայէք ձեր արիւնը Հայրենեաց, ազգի և կրօնի պաշտպանութեան.

յիշեցէք ձեր ուխտն, աշխատեցէք սրբել ձեր ուրացութեան կեղտը, մի՛ հաւատայք Վասակայ խաբերայ խօսքերին, Յազկերտ երդուել է արեգական վերայ՝ անշուշտ պատժել նորան իբրև ստախօս և երկու կողմի վնասակար թշնամի, Յազկերտի նպատակն է բառնալ Հայ անունը՝ կուլ տալով իւր մէջ կամ ջնջելով, թէև Միհրներսեհ խաբէութեամբ խոստանում է Վասակին կամ այլ նախարարի Հայոց թագաւոր պսակել։։

է 450 —ն Փրկչին։

ԳԱՐԵԳԻՆ ԵՒ ԽՈՐԷՆ։

Կեցցէ՛ բարի Ներքինին։

ՎԱՐԴԱՆ։

Ներքինին և Վասակ հակապատկեր են միմեանց, նպատակն արդարացնում է միջոցը, եթէ Յազկերտ պարծում է Վասակայ նենգութեան վերայ, որից վնասուել է և ինքը, մեք աւելի պարծում եմք Ներքինու վերայ, որ իւր խոհական խորհրդով պաշտպանում է ազգ և կրօն։

ԳԱՏԻՇՈՑ։

Ներքինին իւր անհաւատարմութեամբ մեղանչում է Քրիստոնէական կրօնի դէմ, որ հրամայում է մարմնաւոր տիրոջ ծառայել ամենայն հնազանդութեամբ։

ԽՈՐԷՆ։

Ներքինին մարմնով միայն ծառայ է Յազկերտին, իսկ հոգւով՝ Աստուծոյ է ծառայ և հաւատարիմ, նա պարզել է Վասակայ նպատակն, յայտնել է Յազկերտի գիտաւորութիւնը, մեք պատրաստ եմք լսել նորա խրատին և խորհրդին։

ԳԱՐԵԳԻՆ։

Թող գայ Միհրներսեհ, Պարսկաստան իւր աւագ նախարարներին և զօրապետներին թաղելու հող չունի. նա ուղարկում է նոցա պիղծ դիակներն իբրև աղբ Հայաստանի հողը պարարտացնելու։

ՎԱՀՐԱՄ։

Մեք ի զուր խաբուելով Վասակայ շողոքորթ լեզուին բաց թողինք. մեք Սմբատ Բագրատունւոյ օրինակին հետևելու պարտաւոր էինք, հայրենեաց դաւաճան Մեհրուժանի շամփուրէ պսակաւ պսակել։

ՎԱՐԴԱՆ։

Հայրենեաց մատնիչ չար պղուխու վերայ խօսելու միջոց չէ Վահրամ. անցեալն էանց. աշխատելու ենք ներկայից օգուտ քաղել. դնա խորհրդի հրաւիրէ Համազասպեանին, Արտակ Պալունուն, և Տաճատ Գնթունւոյն, Նոքա ժամադիր եղած էին այսօր ներկայ լինել խորհրդին, մեր կամաւոր զօրաց թիւը 60 հազարի է հասել, յառաջ խաղալու եմք, մի՛ գուցէ թշնամին վնասէ սահմանագլխին։

ՎԱՀՐԱՄ.

Շատ բարի (կը մեկնի).

ԳԱԴԻՇՈՅ.

Ես բոլորովին յուսահատ եմ այս յաղթութեան, չգիտեմ թէ ի՞նչ խելքով հաւաքեցինք մի քանի հազար խառնիճաղանճ անմարզ անձինք, նոցա վերայ յոյս դնելով, Պարսից անթիւ բազմութեան և կատաղի փղերի դէմ ելնել, որ մի ափ ջրի պէս պիտի խմէ մեզ. անհեռատես գործը ազգի և Հայրենեաց վնաս է և կործանման պատճառ. միթէ չէ՞ք վախենում ապագայ պատասխանատուութիւնից, հերիք է յամառութիւն պաշտել և լսել մեր անքաղաքագէտ եկեղեցականաց խրատուց, որք կարծում են թէ՝ պատերազմը սաղմոս ասելուց էլ հեշտ է.

ՏԻՐՈՅ.

Միթէ աւելի օգտակար չէ՞ Հայրենեաց, եթէ մեր ընծաներով Պարսից բանակի առաջ գնամք հաշտութիւն և խաղաղութիւն խնդրենք՝ առաջարկելով՝ որ կրօնի վերայ բռնութիւն չլինի, ով ինչ կամենայ զայն պաշտէ. ես համոզուած եմ, որ Միհրներսեհ յանձն կառնու մեր պայմանը, որովհետև Յազկերտ արդէն հրովարտակ ուղարկել է այդ նպատակաւ, և այժմ եթէ կամի պատերազմել, մեր ապստամբութիւնիցն է ստիպուել.

ՎԱՐԴԱՆ.

Մենք չպէտք է բազմութեան վերայ յոյս դնենք կամ բազմութիւնից վախենանք. մեր յոյսը Աստուած է միայն, յիշեցէք Հայկ, Յեսու, Գեդէոն, Մակաբայեցիք. (Համազասպեան, Արտակ և Տաճատ կը մտնեն).

(Կշարունակուի). Ս. Գնունի։

---

## ԲՆԱԿՈՒԱԾ ՏԵՂԵՐ, ՔԱՂԱՔՆԵՐ ԵՒ ԳԻՒՂԵՐ.

(Շարունակ. տես Արարատ, 1884 Ապրիլ)

**Ջրի խմելու որակութիւնները.** — Գիտնականները շատ աշխատեցին գտնել ջրի որպիսութիւնների գիտնական որոշումը, որը կարևոր է մարդուս նորա բազմակողմանի գործածութեան համար, բայց մինչև ցայսօր չեն յաջողուած, որովհետև այն նիւթերի էութիւնը, որոնք կարող են ջուրը վնասակար դարձնել՝ դեռ ևս իմացուած չէ, հետևաբար նրանց չէ կարելի իմանալ ոչ քիմիական գործողութեամբ և ոչ խոշորացուցական հետազօտութեամբ. Երբեմն ևս ջուրը այնպէս պարզ է, որ ոչ թէ միայն նորա մէջ չէ կարելի ապացուցանել վնասակար խառնուրդներ, այլ և կասկածել անգամ անկարելի է, այնու ամենայնիւ պարունակում է իւր մէջ կասկածողական նիւթեր, միւս կողմից ևս ջուրը բոլորովին համը հաւ-